



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

23 մայիսի 2016 թվական N 14-Ա

ՌՈՔԵՐՏ ՆԵՐՍԵՍՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Քաղաքացիական ծառայության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2006թ. հունիսի 26-ի <Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով գործուղելու կարգը սահմանելու մասին> թիվ 546-Ն որոշմամբ սահմանված N 1 հավելվածի 8-րդ և 9-րդ կետերով՝

կարգադրում եմ .

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ռոբերտ Ներսեսյանին ս/թ մայիսի 30-ից հունիսի 10-ը գործուղել Երևան՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ, ՀՀ ՔԾԽ 2012թ. 1078-Ա որոշմամբ հաստատված ծրագրով վերապատրաստման դասընթացներին մասնակցելու:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱՐՈՎՅԱՆ



2016թ. 23 մայիսի  
ք. Իջևան